



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ն 4-Ա

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ՄԱՐՏԻՆ ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆԻՆ, ՄՈՒՇԵՂ ԱՐԱՄՅԱՆԻՆ
ԵՎ ԱԴՐԻՆԵ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ ԿՆԻՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասը, Հանրապետության նախագահի 2023 թվականի հունվարի 26-ի թիվ ՆՀ-27-Ա, թիվ ՆՀ-28-Ա և թիվ ՆՀ-29-Ա հրամանագրերը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 84-րդ հոդվածի 11-րդ մասի 8-րդ կետով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ մասի 12-րդ կետով, Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հունիսի 4-ի թիվ ԲԴԽ-13-Ո-22 որոշման 3-րդ հավելվածի 1-ին և 2-րդ կետի «ա» ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավորներ Մարտին Արզումանյանին, Մուշեղ Արամյանին և Ադրինե Ղուկասյանին տրամադրել իրենց անվամբ կնիքներ:

Կ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

2023թ. հունվարի 27
ք. Երևան